ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/2.5-25

ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի առցանց նիստի

2025թ. փետրվարի 14-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2024 թվականի դեկտեմբերի 23-ի «2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագիրը, 2025 թվականի ծրագրի իրականացման միջոցառումների ժամանակացույցը և ծրագրի իրականացման միջոցառումների ծախսերի նախահաշիվը հաստատելու մասին» N3037-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված **2025 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի** (այսուհետ՝ Ծրագիր) հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2025 թվականի հունվարի 9-ի N1-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) առցանց նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ, Հանձնաժողովի նախագահ
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Դ.Կարապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության պետ
Ա.Բաբայան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետի տեղակալ
Հ.Սահակյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Լ.Բասմաջյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Զ.Հայրապետյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետի տեղակալ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝

Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:

Որոշեցին՝

Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.

- Մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝

Տեղեկատվություն՝ 2025 թվականի փետրվարի 11-ին կայացած նիստի N2/2.5-25 արձանագրությամբ՝ «Տպարան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակի և կանոնադրության ներկայացման վերաբերյալ:

Նշվեց, որ

1. Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը՝ «Տպարան» ՍՊԸ-ն, ընդունելով մրցութային հանձնաժողովի առաջարկը՝ Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված տարբերակի և ներկայացված վերջին խմբագրությամբ կանոնադրության **ամբողջական** տարբերակի տրամադրման վերաբերյալ, Հանձնաժողովի քարտուղարի պաշտոնական էլեկտրոնային հասցեին ուղարկվել է Ծրագրի ֆինանսական նախահաշվի շտկված և կանոնադրության **ամբողջական** տարբերակները (առկա են էլեկտրոնային տարբերակները):

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված 2-ի 2.5 կետով նախատեսված **«Գովազդատեղեկատվական նյութերի ստեղծում, ձեռքբերում»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպության՝

• **«Տպարան» ՍՊԸ-ի** հետ՝ 35 000 000 (երեսունհինգ միլիոն) (այդ թվում՝ 5 833 300 (հինգ միլիոն ութ հարյուր երեսուներեք հազար երեք հարյուր) ՀՀ դրամ ԱԱՀ) ՀՀ դրամի չափով,

2. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ա.Մկրտչյան - _____
(Հանձնաժողովի նախագահ)

Ս.Հովհաննիսյան - _____

Դ.Կարապետյան - _____

Ա.Բաբայան - _____

Հ.Սահակյան - _____

Լ.Բասմաչյան - _____

Զ.Հայրապետյան - _____

Շ.Հովսեփյան - _____